

# ԴՊՐՈՑԱԿԱՆ ԶԲՈՍԱԿՆՔ

ՅՈՎՀԱՆՆԵՍ ԲԱՐԻՈՒԻԴԱՐԵՍՆՑԻ

Der Ort, wo Schüler und Lehrer eben jetzt stehen, ist der Punkt, von wo man sich orientiren und seinen Gesichtskreis in Gedanken ausbreiten soll. Niemals darf die Sinnliche Anschauung übersprungen werden, wenn sie von selbst die Anknüpfungspunkte darbietet.

HERBART.

(Այն տեղը, որ աշակերտներ և ուսուցիչներ հէնց այժմ կանգնած են, այն կէտն է, ուսուցիչը պէտք է մարդ դիտէ և իւր հայեցողութեան շըջանը մտքով ընդորձակէն նըրեք ըստ պէտք է զգայաբանական դիտողութիւնից թուրս թռչել, եթէ նա ինքը բաւարար է):

ՀԵՐԲԱՐՏ:

I.

Մեղանից ով չը գիտէ, որ մարդուս ծննդեան տեղը մեծ ազդեցութիւն ոնք նորա մտաւոր կեանքի վերաբ: Հոմերոսի ժամանակներից սկսած մինչև ասոր երգում են բանաստեղծներն հայրենիքի գովեստուր: Պատմագիրներն անգամ աշխատում են ատպացուցանել այն աղղեցութիւնը, որ զործել է ծննդավակրն այս կամ այն հերոսի մտաւոր շըջանի, զգացմունքների և կամքի վերաբ: Ֆիլօսօֆաները նաև փստ չեն մնացել իրանց զուտ հոգեբանական կարծիքներն արտապատելու: Սակայն մանկավարժութիւնն այն ժամանակ է հասկացել այդ իրողութեան ճշմարտութիւնը, երբ այդ լաճախ արտապատել են բանաստեղծներն և պատմագիրները, երբ սկսել են փիլօսօֆաների ընդհանուր սկզբունքները մասնաւորել: Կոմինիոսը,

Գեստալոցցին, Դիտուրեւեգը, Հերբարտը, Ցելլերն և ուրիշ մանկավարժական հեղինակութիւններ համոզմունքով են շնչուում ծննդեան տեղի նշանակութիւնը մարդկութեան կրթութեան համար, և ասոր ոչ մի հասկացող ուսուցիչ անգամ չէ կառկածում այդ իրողութեան ճշմարտութեան վերաբ:

Այժմ առնք մեզ հետեւեալ հարցը.—ինչի՞ մէջ է կապանում ծննդեան աելք ազգեցութիւնը մանկան մտաւոր շրջանի զարգացման և նորա սահուն ընթացքի վերաբ:

Մարդս աշխարհ գալով, սկսում է իւր հոգու բովանդակութիւնը զարգացնել, հարստացնել ծննդեան տեղի բնութիւնով. Այդ վերջինն առիթ է տալիս հազարաւոր գրգիւների, որոնք զգայարանքների միջոցով մարդու հոգուն են հասնում: Սական հոգին դէպի այդ հում նիւթն անտարբերութեամբ չէ վերաբերում, այլ սկսում է մշակել գրգիւներից զարձնում է զգալութիւններ և այդ վերջիններից՝ մտապատկերներ, իսկ մտապատկերների փոխազարձ լարաբերութիւնից լառաշացնում է զգացումներ, ցանկութիւններ, ձգումներ, կամք և այլն<sup>1)</sup>: Ինու այդ բաւական չէ. ծննդեան տեղից սուսացած մտապատկերներն աւելի նշանաւոր դեր են խաղում, ըստ որում երաշխատարում են նոր մտապատկերների ընդունելութիւնը, որից և միծ կախումն ունի հոգու ապագակ եռանդուն կեանքը:

Ծննդեան տեղի մտապատկերներն, որոնք իսկապէս հոգու առաջին հիւրերն են, այնպիսի ամուր տեղ են բռնում հոգու մէջ, որ նորա հաստատուն հիմքն են կազմում: Այլ տեսակ անկարելի է, ըստ որում մանուկն ան առարկակին իւրաքանչյուր քավագիշուում հանդիպելով, որից մտապատկեր է ստացել և այդ վերջինը լաճախ վերարտադրելով, այսինքն՝ ի գիտակցութիւն ածելով, ամբացնում է իւր հոգու մէջ, Բացի այդ պէտք է նաև աչքի առաջ ունենալ այն հանգամանքն, որ մարդուս կեանքի ոչ մի պարբերութեան մէջ գրգիւներն աճնպէս ուժեղ չեն, ինչպէս նորա մանուկ հասակում. այն բանը, ինչ որ հասակն առած մարդուս աչքներից աննկատելի կերպով սլանում է առանց հետքեր թողնելու, ըմբոնում է մանուկն իւր սուր և կազմակի նման վառվուուն աչքերով և իւր հոգու մէջ տեղ տալիս:

Սական իւրաքանչյուր փորձառու ուսուցչի քաջ կալտնի է, որ երեխաների ծննդեան տեղից ստացած և իրանց հետ դպրոց բնրած մտաւոր աշխարհի բովանդակութիւնն անկատար և անգոհացուցիչ է: Խօսքս վերաբերում է զիլսաւրապէս քաղաքի երեխաներին, թէս նոքա իրանց հետ աւելի հարուստ մտաւոր պաշար են դպրոց բնրում քան գիւղական երեխաները. առաջինները վեց տարեկան հասակում անգամ այնպիսի մտապատկերների տէր են լինում, որ գիւղացին գուցէ հաղիւ ձեռք բնրէ իւր

1) Համեմատի՛ր «Über Apperception» Dr. Karl Lange.

ամբողջ կեանքի ընթացքում, իսկ միթէ դոքա պէտք է լինին քաղաքացի մանկան հոգեկան զարգացման սկզբնական նիւթն, որից և դասաւութիւնը պէտք է սկսէ, եթէ վերջինը հիմնւած է հոգեբանութեան ծշմարիս մկըզ-րունքների վերաբ, Տարաբաղդաբար, ստիպւած ենք բացասական պատաս-խան տալու, ըստ որում բազմազմանի քաղաքն մանկան աճնպիսի մնծ քանակութեամբ մտքի նիւթ է տալիս, որ նորա թարմ հոգին չէ կարողա-նում ալդ բազմատեսակ նիւթին իշխել և ապա մշակել. հէնց ալդ հիման վերաէ քաղաքացի մանկան մտապատկերների մեծամասնութիւնը թուլ ու մութն է. Բայց դորանից, նա հազիւ է ունենում մտապատկերներ աճ-պիսի առարկաներից, որոնք լածախ դասաւութեան նիւթն են կազ-մում. Միթէ քիչ է պատահում, որ քաղաքացի մանուկն անտառ, գետ, դանաղան բուսեր և կենդանիներ, մարդուս ամենահասարակ և պարզ դրազմունքն և ալլ դասաւութեան համար աճնրածեշտ նիւթերն տեսած չը լինի. Թէ ո՞ր աստիճան փոքր է քաղաքացի երեխաների ալդ վերո-վշեալ առարկաներից ստացած մտապատկերների թիւը, պարզ ցուց են տափս մեզ 1869 թւականին Քերլինի դպրոցներում տեղի ունե-ցած քննութիւններն. Քննութեան հաշւից երեսում է, որ երեխաներից  $70\%$  չեն տեսել արեգակի մասը մտնելն,  $54\%$  առաւօտեան արշալուն,  $75\%$  կեն-դանի նապաստակ,  $66\%$  գիւղ,  $67\%$  ոսր,  $89\%$  գետ և ալճ. Ուրեմն աճնրա-ծեշտ է մանկան ծննդեան տեղից ստացած մտապատկերների շրջանը լու-ծել և լաճացնել. Ալդ դպրոցի գործն է. Նա պէտք է մանկան հոգու աճ-կատար բովանդակութիւնն, ամբողջացնէ սիստեմատիկաբար նոր նիւթ մա-տակարարելով. Դպրոցն պէտք է շարունակէ աճն, ինչ որ կեանքն երե-խանի դպրոց մտնելուց առաջ սկսել է տալ, աւսինքն՝ նա պէտք է ըն-տանիքի դրած հիմքի վերաբ նոր լինութիւն կառուցանէ:

Դուցէ շատերն նկատեն, թէ մանկան ծննդեան տեղից ստացած մտա-ւոր շրջանի զարգացումն՝ աւսպէս անուանեալ «դիտողական դասի» (Anschauungsunterricht) կամ հալբենագիտութեան (Heimathskunde) գործն է. Աւաշինը լածախ դրազմում է դպրոցի մէջ դանւող առարկաների բա-ցատրութեամբ, իսկ դպրոցից դուրս առարկաների մասին խօսելիս բա-ւականանում է միայն անշունչ նկարներով, որոնք կեանքի մի ակնթարթի ալս ու աչն պատկերն են ներկալացնում. Նրկրորդը սկսում է իւր գործը լաճակի հալեացքներից, և դուցէ նշանակութիւն ու-նենար, եթէ նորա դասաւութիւնը ստորին դասարաններում չը սահմա-նափակէր. Եթէ լնդունենք, որ «աւզենագիտութիւնը կարող էր նշանա-կութիւն ունենալ և կը համապատասխանէր իւր կոչմանն, անու ամնալ-նիւ զուտ հոգեբանօրէն քննելով՝ կը դանենք նորա մէջ մանկավարժական սկզբանքների հակասող տարրեր. Ալդ վերջիններն նորա մէջն են կազա-նում, որ հալբենագիտական մտքի շրջանը չէ կարող միանալ, ճիշդ լարա-բերութեան մէջ մտնել մատակարարած նոր նիւթի հետ, ըստ որում «հայ-

րենագիտութիւնը» շատ բան է իւր մէջ պարունակում, որ 6 կամ 7 տարեկան մածովը զեռ չէ կարող հասկանալ:

Գուցէ շատերն այն կարծիքի լինին, թէ մանուկներին ծննդեան տեղի առարկաների հետ սատրճանաբար ծանօթացնելը ծնողաց գործն է. Յիրափի, վերոփիշեալն իւր մէջ պարունակում է ծշմարտութիւն, սակալն սարաբաղլաբար փորձը ցող է տալիս, որ մենք չը պէտք է միայն լուսներս ընտանիքի վերակ դնենք: Ճիշդ են լութերի խօսքերն վերջինիս վերաբերմամբ իւր «Sendschreiben an die Bürgermeister und Raths-herrn» երկի մէջ.—Ընտանեկան կրթութեան իւր նպատակին չը հասնելն անէ իւր պատճառներն Առաջին՝ կան ծնողներ, որոնք ոչ առաքինի և ոչ էլ աղնիւ են, որ իրանց զաւակներին լաւ՝ կրթութիւն տան, չը նակելով որ նոքա կարող էին ընդունակութիւն ունենալ՝ կրթութեան գործի մէջ, Երկրորդ՝ ծնողների մնամասնութիւնը, ցաւաք որտի պէտք է ասել, անընդունակ է, ըստ որում նա բոլորպին զաղափար չ'ունի զաստիարակութեան վերակ: Երրորդ՝ ընդունենք, որ ծնողներն ընդունակ են և մեծ բաղձանք ունին իրանց զաւակներին կրթելու, սակալն գործի աէր մարդիկ լինելով, ժամանակ չ'ունին: Առաջին երկու նկատողութեանց վերաբերմամբ պէտք է ասել, որ ալմ ընդհանրապէս աւելի բարուքրւած վլճակի մէջ ենք գտնւում, նոյնը չէ ինչ որ 1524 թւականին էր: Խակ ինչ երրորդ կեալին է վերաբերում, ընտանիքների մնամասնութիւնը, զուղութեան համար պատերազմելով, անուշագիր է թողնում զաւակների գաստիարակութիւնը: —Վերևի առղերից երևում է, որ մի ծշմարիտ կրթական զասաւալութեան համար ծննդեան անգից հարուստ նիւթ մատակարարելու համար՝ չը պէտք է մեծ լուս դնենք թէ հարենագիտութեան և թէ ընտանիքի վերակ: Ապա ինչին վերակ պէտք է լուս դնենք: Դորա պատասխանը կարող ենք Զալցմանի «Ameisenbüchlein» գրքի մէջ գտնել, որտեղ նա այն միտքն է լալտնում, թէ բնագիտական զասաւալութիւնը պէտք է ծշմարիտ դիտողութեան վերակ հիմնարկ: Սակալն չէ կարելի ձին, զոմէշն, եզն ու ալ կենդանիների զասաւալ բերել: «Որովհետո մենք չենք կարող կենդանիներն երեխաների մօտ բերել, ասում է նա, ուստի պէտք է երեխաներին կենդանիների մօտ տանելո: Այս զաղափարից պէտք է ենթադրենք հետևեալը: որովհետո ուսուցիչն անկարող է մանկան ծննդեան տեղի առարկաների մեծ մասը զպրոց բերել, ուստի պէտք է նա սանիկներին ալդ առարկաների, մօտ տանէ, որպէս զի նոքա ալդ վերջինները դիտեն և դոցանից ստացած հոգեկան պատկերներն, սրպէս ամենամիշտ ճանապարհով ձեռք բերած մտաւոր հարստութիւն, իրանց հետ ուսումնարան բերեն:

Մենք պէտք է շաճախ զպրոցը թողնենք և մեր սանիկներին առաջնորդենք դէպի ծննդեան տեղի շրջակացքն, որպէս զի նոքա իրանց սուր աչքերով զիտան այն, ինչ որ լետու սիստեմատիկաբար զպրոցում պէտք է աւանդւի: Մի խօսքով՝ պէտք է զպրոցական զբոսանքների ձևանարկինք:

Մինչև ակժմ խօսելով ընդհանրապէս ծննդեան տեղից ստացած մտապատկերների մասին, տեսնենք զպրոցական զբօսանքի նշանակութիւնը այս կամ այն առարկալի աւանդութեան համար:

ԴՊՐՈՑԱԿԱՆ ԶԲՈՍԱՆՔԻ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ ԴԱՍՏԻՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ:

ա. Աշխարհագրութիւն:

Ի՞նչ նիւթով պէտք է ուսուցիչը վերակշալ առարկալի զասաւութիւնը սկսէ: Աշխարհագրութեան դասի սկզբնական նիւթը պէտք է ծնընդեան տեղը մատակարարէ: Այդ միտքն առաջին անգամ արտադարել է Ռուսոն: Պարզ է, որ այդ հոգեբանական ճիշդ որոշումն պէտք էր նորագովն մանկավարժութեան մէջ առելի աղդու շեշտէք, ըստ որում Ռուսով ժամանակի հոգեբանութիւնը ժամանակակից հոգեբանութիւնից շատ հեռու է: այն ինչ որ մի քանի դար սորանից առաջ պատահմամբ արտասանել է ակս ու այն մանկավարժներից՝ ակսօր կարելի է հոգեբանական վերլուծման (Psychologische Analyse) ենթարկել: Ուրեմն ինչու համար պէտք է աշխարհագրութեան առաջին նիւթը ծննդավարը լինի: Դասաւութեան նպատակն է գաղափարներ տալ սանիկներին, իսկ գաղափարներ ձեռք բերել կարելի է հակեացքների միջոցով: Աշխարհագրական գաղափարներ ստանալու համար պէտք է հակեացքներ ունենալ, իսկ հակեացքների նիւթը կարող է միան ծննդավարը լինել:

Աշխարհագրութեան դասը կարող է հեշտութեամբ, ուսուցչի հոգեբանական տգիտութեան պատճառով, լոկ անունների կամ թղթի աշխարհագրութեան փոխադրել, եթէ նա իւր հաստատ «արխիմեդական կէտը» սանիկը ծննդեան տեղում չ'որոնէ: Երեակալեցէք, թէ ի՞նչ մնձ պահանջողութիւններ է անում աշխարհագրութեան դասաւանդութիւնը սանիկի մտաւոր գործունէութիւնից: Սանիկը պէտք է հոգեպէս փոխադրեի հաղարսոր մղոններ հեռու իւր ծննդեան տեղից օտար երկիրներ: Նա պէտք է ուսուցչի առաջնորդութեամբ թափառէ անծանօթ քաղաքներ, տէրութիւններ՝ այդ վերջինների բնակիչների, նոցա զբաղմունքների և սովորութիւնների հետ ծանօթանալու համար: Նա պէտք է նոր և հին աշխարհի մէջ գտնւող ձիւնապատ սարերից մտապատկերներ ստանալ: Նա պէտք է մինչև անգամ երկրագունդս հոգեպէս թողնէ՝ երկնքի աստղերը դիտելու համար: Ուրեմն պարզ է, որ աշխարհագրութեան դասն սանիկի երևակալութեան գործունէութիւնից մնձ պահանջողութիւններ է անում: Նոյնպէս պարզ ցուց է տալիս մեզ հոգեբանութիւնը, որ այն տարրերն, որոնցից երևակալութեան մտապատկերներն են զառաջանում, մանուկը պէտք է հակեացքների ձևով ունենալ իբրև մտաւոր հարստութիւն: Այն ժամանակ

միավն կարող է նա աշխարհագրութեան դասի ժամանակ ուսուցչի ասածը հասկանալ, եթէ ուսուցչի մատակարարած նոր նիւթը նորա մտքի շրջանի մ.ջ ազդակից տարրեր է զտնում: Ծննդեան տեղի գետինն և երկինքը կաղմում են այն հիմնագարք, որի վերաբ պէտք է աշխարհագրութեան դոնդուն շինութիւնը կսնդնեցնել: Եթէ աշակերտը զուրկ է այդ վերովիշեալ հիմնագարք կազմող նիւթից, եթէ նա չ'ունի խրացուցողական մատապատկերներ, այն ժամանակ նա ուսուցչի ամենակենզանի դասախոսութիւնն անգամ չէ կարող հասկանալ: Եթէ մինչև անգամ ուսուցիչն իւր ձեռքի տակ ունենակ ամենազեղեցիկ քարտէզներ, ուելքիններ և զլորուսներ, աշակերտն կ'իւրացնէ նորա ասածներն, որպէս միռած խօսքեր:

Կարլք չը կատ ապացուցելու, որ ծննդեան տեղի աշխարհագրութիւնը միմիան կարելլ է սիստեմատիկաբար կրկնող զրօսանքների միջնորդ սակորել: Ռւսափ մենք՝ ուսուցիչներս՝ պէտք է ծանօթացնենք սանիկներին նոցա ծննդեան տեղի բնութեան, առաջնորդնենք նոցա ծննդեան տեղի անտառները, ձորերը, հովիտներն և արտերն, դիտենք սարերի ուղղութիւններն, գետերի հոսանքը. բարձրանանք սարեր և աճնտեղից նակենք այն տեսարանին, որ այդ բարձրութիւնից բացւում է մեր առաջ: Մի խօսքով՝ ծանօթացնենք սանիկներին այն բոլորի հետ, ինչ որ ծննդեան տեղի բնական հարստութիւնն է կազմում: բացի դորանից, այս բնական ճանապարհով կարող է սանիկը ձեռք բերել զանազան աշխարհագրական գաղափարներ: Մի ուրիշ անգամ պէտք է թափառենք ծննդեան տեղում դտնուղ մի փոքրիկ գետակի շրջակաբն, գնանք ուղղակի հոսանքի դէմ՝ նորա աղբիւրն դրտնելու համար, բոլոր ժամանակ աչքի առաջ ունենալով նաև այն բարձրութիւնն, որի վերաբ մենք կանգնած ենք: Վերջապէս քննենք դետակի նըշանակութիւնը շրջակաքի համար: Ացցելենք մի փոքրիկ լճակ՝ աշակերտներին գաղափար տալու համար կղզու, թերակղզու, խորշի և ազոց մասին: Մեր քաղերն ուղղենք նաև դէպի հացենեաց հողի սարոտ և աւաղոտ կողմերն, որպէս զի աշակերտները ձեռք բերեն իւրացուցողական մտապատկերներ՝ անապատ, սարոտ երկիրներ ըմբռնելու համար: Չը մոռանք նոխնպէս խուլ անտառներ մտնել՝ աշակերտներին կողմնացոցի գործածութիւնը սովորեցնելու համար: Նաև պէտք է, ձմեռ ժամանակ, երբ ամբողջ երկիրն ձիւնով պատած է, սարեր բարձրանալ բնութիւնը դիտելու համար: Որպէս զի աշակերտներն իւրացուցողական մտապատկերներ ունենան հիւսիսակին սառնամանիք երկիրների աշխարհագրութեան դասաւրութեան համար:

#### բ. Պատմութիւն: ..

Դաւոցէ շատերը կարծեն, թէ դպրոցական զրօսանքները պատմութեան դասի համար բոլորավին նշանակութիւն չ'ունին, ուրիշ բան է աշ-

իսարհագրութեան դասն, որը մեծ մասամբ աշխարհիս արտաքին տեսութեան հետ գործ ունի Ագդ կարծիքը կարող էր ճշմարիս լինել, եթէ պատմութեան ներքու հասկանավնք լոկ թւարի, իշխանների, պատերազմների անունների ժողովածու, որի նպատակն լինէր աշակերտներին ուսուցանել, թէ այս թւականին վախճանւեց այս ինչ թագաւորն, նորանից փետու գահ բարձրացաւ նորա այս ինչ որդին, այդ վերջնը միմիան որսորդութեամբ էր պարապում և ազն: Ճիշտ է, որ մի ակսպիսի պատմութեան համար դպրոցական զրօսանքը նշանակութիւն չ'ունի: Սական ուրիշ բան է, եթէ պատմութիւնն իրան նպատակ դնէր հստեսալ հարցին պատախանելու: ո՞րն է ան ուղին և որո՞նք են ան փաստերն, որոնց միջոցով մարդկութիւնը ներկատ կննցաղակրթական (Կուլտուրական) աստիճանին է հասել:—Այս ժամանակ միայն կարող են դպրոցական զրօսանքները կարևոր լինել պատմութեան դասի համար: Ուսուցչի պատմածը պէտք է սանիկի վերաէ աշնապէս աղղէ, որ այդ վերջնը զգաւ իրան այն դարում, այն ժամանակամիջոցում, երբ այս կամ այն պատմական անցքը տևղի է ունեցել. մի խօսքով, ուսուցչի պատմածը պէտք է սանիկի սրտի մէջ առատ զգացումների աղքիւր բանակ. իսկ զգացումներ լառաջացնելու համար կարևոր է վերովիշեալի կատարեալ իւրացուցումն: Ուստի աշակերտը պէտք է առաջուց շատ բան տեսած և լած լինի, որ կարողանակ նոր նիւթն իւրացնել: Սական փորձը ցուց է տալիս, որ լաճախ մանկանց փորձնական շրջանը նեղ է, նոքա չ'ունին պատմական նիւթի համար իւրացուցողական մտապատկերներ: Օրինակի համար՝ ի՞նչպէս ըստանաէ քաղաքացի մանուկն կենդանի պատկեր նահապետական աշխարհի պարող, միակողմանի կեանքից, քանի որ նա ոչ մի ժամանակ չէ տեսել զիւղական այն հասարակ ու պարզ ընտանիքն, որը հարիւրաւոր տարիների ընթացքում իւր բնաւորական կեանքը փոփոխութեան չէ և նթարկել: քանի որ նա չէ տեսել հովկին իւր հօտը կանաչ սարերում արածացնելիս, որն իւր կեանքի մեծ մասը անմարդաբնակ սարերի, հալլաների վերաէ է անցկացնում, որն կարծես թէ աճնառը իրան ամելի ուրախ և բազգաւոր է դգում և որի անկեղծ բարեկամն է իւր փակտեակ սրինդը:

Ուստի պէտք է մանուկներին առաջնորդներ քաղաքից դուրս գիւղեր, որպէս զի գաղափար ստանան գիւղական պարզ կեանքից: Բացի աչդ, դպրոցական զրօսանքի միջոցով կարելի է հին արձաններ, քանդակագործութիւններ, աւերակներ զիտել, որոնք անցեալի ճիշտ պատճենն են ներկաւացնում, ուստի և կարող են որպէս իւրացուցողական մտապատկերներ ծառապէլ: Ծննդեան տեղում զանւող աւերակներին պէտք է զրօսանքի միջոցով ծանօթանանք, ըստ որում զոքա կարող են սանիկին գաղափար տալ ծննդեան տեղի փաստաւոր անցեալից և զասատութեան ժամանակ այդ երկրի պատմութիւնը անցնելիս՝ նոքա աւելի զգացումներով կ'ընդու-

նեն աղդ վարի անցեալը: Նոյն զբօսանքը պէտք է նաև քաղաքի մէջ ա-  
նել, եթէ անտեղ գտնւում են պատմական թանգարաններ: Սակայն վեր-  
ջինի առարկաների վերակ ընդհանուր հաճեացք ձգելաւց չը պէտք է բաւա-  
կանանք, առ իւրաքանչիւր առարկակ ճիշդ ուսումնասիրենք:

Եթէ ծննդեան տեղի հարուստ պատմական նիւթին աշակերտը լաւ  
ծանօթ է, ապա և աւելի հաստատ կ'ըմբռնի միջազգակին բաղմակողմանի  
պատմական նիւթը:

#### գ. Բնագիտութիւն:

Դաստաւութեան ոչ մի առարկակի համար դպրոցական զբօսանքն  
ավելքան օգտաւէու չէ, որքան ընագիտական առարկաների համար: Դա ա-  
պացուցման կարօտ չէ, ըստ որում իւրաքանչիւր հասկացող ուսուցիչ  
իւր գործնական ասպարիզում լաճախ զգացած: Կը լինի խօսքերիս ճշմար-  
տութիւնը: Նախ բաղմաթիւ առարկաներ միմիան կարելի է բնութեան  
մէջ դիտել, որպէսուն աղդ վերջիններն, իրանց մեծութեան պատճառով, ան-  
կարելի է դպրոց բերել: Օրինակի համար՝ սօսի ծառի տերեններ, ճիւղեր և  
ապն կարելի է զասատանը դիտել, իսկ ընդհանրապէս հակական սօսու  
մասին զաղափար ունենալու համար պէտք է տեսնել բնութեան մէջ: Դըպ-  
րոցում բացակաէ է նաև թէ բոլսի և թէ կենդանու կեանքն, որ միմիան  
դրսում կարելի ուսումնասիրել: Մի անշունչ թռչուն կամ բզեզ ներկա-  
չացնում է մեղ իւր կեանքի մի որոշ ակնթարթ, մննք տեսնում ենք ան-  
պէս, ինչպէս նոքա կարող են մի որոշ ժամանակի տարածութեան մէջ  
լինել իսկ աղդ պատկերից չենք կարող քաղել նորա կեանքի «պատմու-  
թիւնը»: Մարդ չէ կարող հաստատել, թէ այս ինչ բոլսը ճանաչում է, ե-  
թէ նա բոլսի կեանքի մի պարբերութիւնն է տեսել: Իսկ ճանաչելու հա-  
մար կարեոր է աղդ բոլսի սերմն, աճումն, ծաղիկները, պառողները դի-  
տել: Սակայն դորա համար դպրոցական զբօսանքը մէկ անդամով չը պէտք  
է վերջացնել, առ լաճախ կրկնել:

Բաց զպրոցական զբօսանքի զլսաւոր նշանակութիւնը բնագիտու-  
թեան զասերի համար նորա մէջն է կապանում, որ սանիկը հեշտութեամբ  
կարող է զլսակից լինել: թէ բնութեան մէջ աննպատակ ոչինչ չը կաէ և  
նորա իւրաքանչիւր արդիւնքն մի զգալարանական ամբողջութեան մասն  
է կազմում: Դպրոցական զբօսանքների միջնորդութեամբ կարելի է աշա-  
կերակն ցուց տալ թէ մարդկագետիններում առ բոլսեր են բունում՝ ան-  
տառներում՝ ալչ, դաշտերում՝ ալչ, և օդից, լոսից, ջրից, ջերմութիւ-  
նից, խոնաւութիւնից կախումն ունի մի երկրի կենդանիների և բոչ-  
սերի զարգացումն:

Մի քանի խօսք նաև հանքարանութեան վերաբերմամբ: Ի՞նչպէս

անշունչ է ուստացչի խօսքը մի ժարուի կաղմութեան և ալդ վերջինի զիրակ ունեցած ջրի բնալուծական և մեքենաական ազդեցութեան մասին. բաց ի՞նչպիսի խոր արմատներ է ձգում, երբ աշակերտը վերոփիշեալը սիստեմատիկաբար անցնելուց առաջ ինքն անմիջապէս դիտում է այն ժարու և նորա կաղմութեան հիմունքներն իւր հոգեկան աչքերով որոնում է և գտնում:

Վերջապէս զպրոցական զբօսանքների միջոցով ծննդեան տեղի բնութիւնից ձեռք բերած հոգեկան պատկերները կարող են ամենաամուր հիմնաքարը կաղմել օտար երկրիների բնութեան ուսումնասիրութեան համար. Սիսալ չէ ասում այս դէպքում Ալեքսանդր Հումբօլդտը. «Երկրագնդիս իւրաքանչիւր անկիւնի բնութիւնը հանելու նման ներկազցնում է իւր մէջ ամբողջ բնութիւնը»:

#### Դ. Ուսուղութիւն (Mathematika).

Գուցէ ընթերցող հասարակութիւնը կարծէ թէ դպրոցական զբօսանքներն ուսողական առարկաների զասատութեան համար մեծ արժէք չ'ունին. Սական փարձը ցուց է տալիս, որ ալդ գիտութիւնները և զբւխաւրապէս երկրաշափութիւնը գժւար է արմատ ձգում մանկան մատուր շրջանի մէջ. Դորա սկզբնապատճառը կարելի է նորա մէջ զտնել, որ առարկաների զասատութիւնը սկսում է ասանց հիմնելու աշակերտի փորձնական աշխարհի վերաբ. Զը պէտք է երկրաշափութիւնը սկսել ըստ գիտնական սխառեմի կէտի և ուղիղ գծի վերլուծումից, այլ տարածութիւն չափելու է դպրոցական երկրաշափութեան սկիզբն. Սական դասատանը չափելու նիւթ շատ քիչ կա և բացի դորանից, բոլոր աշակերտներն էլ անկարող են մասնակցել, վասն զի դպրոցի տարածութիւնը փոքր է. Ուստի պէտք է նոյնը դպրոցից՝ դուրս փորձել. Միթէ բնութիւնը քիչ նիւթ է տալիս մեղ չափելու համար. Ահաւասի՛կ ուղիներ, շնութիւններն ծառեր, արտեր, մարգագետներն ու նախ պէտք է չափել քաղերով, բաց որովհետեւ աշակերտների քաղերը տարբեր են, ուստի նոքա կը փափազին մի որոշ չափ ունենալու. Գործածութեան համար կարող ենք հետներս մի քանի որոշ չափեր վերառնել, օրինակի համար՝ մի սաժեն երկարութեամբ ձող, մի քանի թոկեր, մէկն, դիցուք, մի սաժէն, իսկ միւսն՝ հինգ. Այդ վերջինի միջոցով, ամբողջ զասարանի մասնակցութեամբ, կարելի է մի վերստաարածութիւն չափել, որը նաև աշխարհադրութեան համար անհրաժեշտ է. փոքրիկ թոկով կարելի է ծառերի բունը չափել. Այս դէպքում պէտք է նախ փարժւած աշակերտներին հարցնել նորա մօտաւորապէս որոշումն, ապա թէ թոկով չափել, որպէս զի ամբողջ զասատունը տեղեկանակ թէ այս կամ այն աշակերտի որոշած թիւն միշտ է թէ ոչ. Նոյնապէս պէտք է աշակերտները վարժեն չափելում, օրի-

հակի համար՝ մեծ քարեր, արտերի սահմաններ և աղճ, Դեռ երկրաչափութեան սիստեմատիկական դասատրութիւնը չը սկսած, աշակերտները պէտք է նորա վերացական Փիզուրաները բնութեան մէջ լաճախ տեսած և քննած լինին, ըստ որում աշակերտը շատ անգամ երկրաչափական Փիզուրավի ներքու ան է կարծում, ինչ որ կավճով գրատախտակի վերակ կամ մատիտով լիւր տեսրակի մէջ նկարւած է, սական թէ նա իւրաքանչիւր քակափոխում եռանկիւնների, քառակուսինների, շրջանների է հանդիպում, նա չէ նկատում աղք: Չը պէտք է եռանկիւնու ընդհանուր վերլուծումն աւանդել, եթէ աշակերտն իրականութեան մէջ բաղմաթիւ եռանկիւններ չէ տեսնել. նույնը վերաբերում է նաև միւս երկրաչափական մարմիններին:

Զբօսանքները կարող են լաճախ թւարանական խնդիրների վերլուծման առիթ տալ: Թող վիշէ ընթերցողը, որ իւրաքանչիւր ժողովածուի հարիւրաւոր թւարանական խնդիրներ երկրաչափական նիւթ են պարունակում իրանց մէջ:

#### Ե. ԳՃԱՋՐՈՒԹԻՒՆ:

Յոլոր հեղինակութիւն ունեցող մանկավարժներն ալս առարկակի աւանդութեան մասին տարրեր կարծիքներ են արտակարտում: Սական ցանկալի է, որ ան ուղղութիւնը զերիշխող հանդիսանալի, որը Փիլասոֆակական մանկավարժութեան սկզբունքների վերակ է հիմնւած: Ըստ ալդ ուղղութեան, պէտք է բոլոր աւանդելի առարկաներն իրար հետ կապւած լինին, որպէս զի իւրաքանչիւր դասարանում աւանդող առարկաներն միասին, որպէս ամրողութիւն, համապատասխանեն մարդկութեան կենցաղակրթութեան զարգացման մի պարբերութեան: Զանազան տարածանութիւնների առիթ չը տալու համար՝ պարզենք մեր ասածներն, իւրաքանչիւր անհատ իւր կեանքի զարգացման մէջ անցնում է նոյն պարբերութիւններն, ինչ որ ընդհանրապէս մարդկութիւնը ինչպէս իւրաքանչիւր անհատ նախ անցել է իւր մանկութիւնը, նոյնպէս էլ մարդկութիւնը անցել է իւր մանկական հասակն: Մարդկութեան կեանքի առաջին պարբերութեան արդիւնքն է հեքիաթը: Հետեաբար, հիմնելով վերովաշեալի վերակ, պէտք է հեքիաթները լինին մանկան առաջին տարւագ դասատրութեան նիւթը, ըստ որում դա հոգեբանօրէն (psychologisch) ամենամօտն է մանկան մտաւոր շրջանին: Իւրաքանչիւր դասատրու պէտք է, ըստ վերովաշեալին, մարդկութեան կենցաղակրթութեան մի որ և իցէ պարբերութեան համապատասխանէ: Իսկ զորա համար էլ իւրաքանչիւր դասատրու պէտք է անպիսի նիւթ աւանդուի, որ արդիւնք լինի մարդկութեան ալդ միջոցին համապատասխանող մտաւոր զարգացման<sup>1)</sup>: (Այս ֆի-

<sup>1)</sup> Համեմատիկ «Die Kulturhistorischen Stufen im Unterrichte der Volksschule». v. Dr. Richard Staude.

լոսօֆակական մանկավարժութեան սկզբունքը կարելի է մասնաւորել՝ փոխանակ մարդկութեան՝ իրաքանչիւր ազգի վերաբերութեամբ։) Այդ գվանաւոր և կենցաղակրթական նշանակութիւն ունեցող նիւթն ներկալանում է մեզ բարովագիտութեան դասի մէջ (Gesinnungsunterricht)։ Այդ վերջնն է որոշում և մատակարարում միւս առարկաների դասաւութեան նիւթը։ Այժմ հասկանալի է, որ բոլոր առարկաններն իրար հետ սերտ լարաբերութեան մէջ գտնւելով պէտք է լարմարեն ան նպաստակին ծառակելու, որ դասաւունը ընտրել է իրան համար։ Ինչպէս զանազան գորների դասաւորութիւնից բառաջանում է մի իւղանկար, ինչպէս իրաքանչիւր գոյն օժանդակում է իւղանկարի մի որ և իցէ առարկակի հաւատարիմ պատճենը ընդորինակելու, այնպէս էլ իրաքանչիւր առարկակ պէտք է իւր ուժի չափ աշխատի, որ դասաւունը կենցաղակրթական մի պատմական պարբերութիւն ներկալանալ։ Հետևաբար եթէ գծագրութիւնը նոյնպէս օժանդակաղ առարկաներից մէկն է, ապա դորա դասաւութեան համար կարենոր են դպրոցական զրոսանքներ։ Նորա նիւթը պէտք է ան առարկան լինի, ինչ որ մանուկն տեսել, դիտել և նորան իւր հոգու մէջ ամուր տեղ է տել։ Բնագիտութեան, պատմութեան, ուսուցութեան և աշխարհագրութեան զրոսանքների միջնորդաւթեամբ դիտած ծննդավարի նիւթերը կարող են գծագրութեան առարկաները լինել։

## II.

ԴՊՐՈՑԱԿԱՆ ԶԲՈՍԱՆՔՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԻ  
ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ:

Դպրոցական դաստիարակչական ազդեցութիւնը նսեմանում է այն հաճ, զամանքում, երբ ուսուցիչներն անձամբ աշակերտների հետ շատ քիչ են լարաբերավթեան մէջ գտնւում։ Դասի ժամանակ ուսուցիչը ծանօթանում է աշակերտների հետ միմիան միակողմանի կերպով, իսկ դասամիջոցներն էլ կարճ լինելով՝ խանգարում են ուսուցչի դիտաւորութեան իրագործումն։ Սակայն չարաբերութիւնը կարող է զպրոցական զրոսանքների ժամանակ տեղի ունենալ, ուր աշակերտները ներկալանում են անպէս, ինչպէս և իրապէս են։ Մանկական հոգին ճնշող նեղ դասարանին փոխարինում է անսահման ընութիւնը, ուր ուսուցիչն ոչ թէ խիստ կարգապահ է հանդիսանում, ապա աշխորդ և մանկական ուրախ զգացումներին մասնակից։ Այժմ ուսուցիչն առիթ է ունենում դիտելու մանկան հոգու խորքերն, նա կարող է աւելի հեշտութեամբ մօտենալ երբեմն սորան, երբեմն նորան և հետազօտել հետաքրքիր զրոցի օգնութեամբ սանիկի պիրտը, զգացումները և ցանկութիւնները։ Այս գէպքից իստու վիրաւի կարող է ուսուցիչն իւր սանիկին

ճանաչել և դատել։ Ասդա նա չաճախ կը խոստովանեմ, որ այս կամ ան աշակերտի մասին սխալ կարծիք է կազմած եղեւ, որ սորան կամ նորան մինչև ապօր չէ ճանաչել։ Նա չաճախ կը տեսնէ, որ ան աշակերտն, որին մինչև ապօր պարտաճանաչ է գտել, կոպիտ եսականութիւն ունի։ Դպրոցական զբոսանքների միջոցով կը տեսնէ նա բարի, կոհացուցիչ, խաղաղասէր, երախտապարտ և ընդհակառակն երախտամու, չարամիտ, դժգոհ մանուկներ։ Քանից անգամ ուսուցիչն կը գտնէ, որ այս կամ ան մանուկը՝ կարծես թէ ճանապարհի նեղութիւնից տոփառած՝ անդթարար կոխելով անցնում է արտերի սահմանները։ Ոչ սակաւ կը տեսնէ նա և այդպիսի մանուկներ, որոնք չեն կարող ճանապարհն հանգիստ գնալ, առանց ծառերին խփելու, ճիւղեր պոկելու և խալ պտուղները գրաբն լցնելու։ Յաճախ նորա ականջին կը հասնեն աշակերտների իրար մէջ տեղի ունեցած խօսակցութիւններն, որոնց մէջ անբարուղականութեան հնառքեր կը գտնէ։ Նա այէտք է տարաբաղդաբար տեսնէ թէ ի՞նչպէս այս կամ ան աշակերտն անդթարար սպանում է մի որ և իցէ կենդանի, թէ ի՞նչպէս մի քանիտն ծաղրում են քեռն շալակած գիւղացուն։ Արդար և ճշմարիտ դաստիարակն ալսպիսի դէպքեր տեսնելիս կը վշտանար։ Սական միան այդ ուսումնասիրութեան միջոցով կարելի է մաքրել աշակերտների սրտերն, և հչնց աղբպէս կարող է նա աշակերտի լաւ և վատ կողմերն ճանաչել, նորա սրտի մէջ արմատացած չարութիւնները գիտենալ՝ այդ ամենը հիմնովին արմատախիլ անելու մտքով։

Սորանով չէ սահմանափակում զպրոցական զբոսանքի ճանակութիւնը դաստիարակութեան գործի մէջ։ Ուսուցչի և աշակերտի մէջ տեղի ունեցած չարաբերութիւնը կարող է բարեկամական բնաւորութիւն ստանալ, որի հետեւանքն ան կը լինի, որ աշակերտը կը սկսէ իւր ուսուցչին սիրել և լարգել, և ախուհետն կը ճանաչէ նորան իբրև բարի խորհրդատու և ճշմարիտ բարեկամ։

Եթէ աշակերտներին լաջողութիւն զպրոցական զբոսանքների միջոցով ուսումնասիրել իրանց ծննդավարը, ան ժամանակ կը վառւի նոցա սէրը դէպի իրանց երկիրն։ Ծննդավարի առաւելութիւններն իմանալուց կը զարգանաց նոցա մէջ պարտաճանաչութիւն դէպի ան կտոր հողն, որում նոքա ծնելը սնել և մեծացել են, և որից կապւած են մանկական կենաց ամենաքաղցր լիշտութիւնները։ Նոքա կը սովորեն իրանց սրտին մօտեցած ալդ վալրը գիտակցութեամբ սիրել և ձեռքից բաց չը թողնել։ Իւրաքանչիւր բարձրաւանդակ և ձոր, իւրաքանչիւր անտառ և դաշտ, իւրաքանչիւր հովիտ և մարդագետին, իւրաքանչիւր անկիւն, ուր նոքա իրանց մանկութեան սուրբ ժամերն են անցրել՝ անգին կը լինի նոցա համար, Եւ միթէ կարող է մոռացմալ ամենաչնչին առարկան անգամ, եթէ նա մալրենի ծանօթ երկրում զուգորդելով քաղցրավիր տպաւորութիւնների հետ, մանկան մտաւոր բջնիւրում ևս գիտակցական որոշ մատապատկերներ կազմէ...

«Աշխարհիս մէջ ամնաարդար գործն և աննկարագրելի ուրախութեանց աղքիւրն է բնութեան հետ զբաղումնո, ասում է Գէօթէն։ Մեր սանիկները պէտք է դիտակից լինին ալդ միտքն և համոզեն, որ ոչինչ չը կատ աւելի ուրախացուցիչ, որքան բնութեան ուսումնասիրութիւնը, որի գաղտնիքներն անկատակ խորութիւններ ունին և որ սական մարդուս թով արւած է սուր հակացքներ նետել ալդ խորութեանց մէջ։ Մեր զպրոցները չն ստեղծում, բառաջացնում աշակերտների մէջ ալդ համոզմունքն, Յաճախ կը անսնէ ընթերցողը աշակերտներ, որոնց օսարդուի է բնութիւնը և որոնք կատարեալ սառնասարտութեամբ են նախում նորա գեղեցկութեան վերա։ Գէօթէն արզպիսիների համար ասում է. «Նոցա զգակարանքները փակ են և սրտերը մնուած»։

Մընչե անգամ չաճախ կը հանդիպես հասակաւոր անձնաւորութիւնների, որոնք մինչև անգամ իրանց ծննդիան տեղի շրջակալքում գտնւող սարերը, Բովլիանները, անցքերը, անտառները, գետերը, գետակները, կենդանիները և բոլսերը չեն ճանաչում, չը նաև լով, որ խրաքանչիւր օր առիթ ունին դիտելու Ակսպիսիների մէջ չէ զարգացած բնութեան ճաշակը, խակ դրա զարդացումն կարող է տեղի ունենալ զպրոցական զրօսանքի միջոցով։ Թէև անուրանալի է, որ մի լաւ զասատութիւն զասարանի մէջ շատ բան կարող է անել բնութեան ճաշակն զարդացնելու նպատակով, սական խօսքերը չեն կարող մարդուս վերապ այն տպաւորութիւնը գործել, ինչ որ բնութիւնը անմիջապէս դործում է, Ազն զդացումներն, որոնք ստանում է աշակերտների թափառող խումբը մի անտառ մտնելիս կամ ծաղկավթիթ մարդագետինների մօտով անցնելիս, չէ կարող ամենազող զասատութիւնը բառաջացնել արտաքու զրօսանքի»։

Նթէ զպրոցական զրօսանքներին չաջողւում է զասատութեան հետ ձեռք ձեռքի տած սանիկների մէջ զգացումներ՝ բառաջացնել և նոցա ուշաղրութիւնը զրաւել բնութեան զեղեցկութեամբ, Կապա լուսալի է, որ աշակերտի բնութեան հետ ունեցած խոր լարաբերութիւնը ընդմիշտ կը պահպանէ, Նողնպէս չը մոռանանք վիշել, որ մի ճշմարիտ զասատիարակ պէտք է բնութեան զեղեցկութիւնից օգուտ քաղէ և ազդէ աշակերտի կրօնական զդացմանց վերաբ ծամանակ է վերջապէս թողնել կրօնական գաղափարների լոկ տեսական աւանդումն։ Ո՞րն է աւելի լաւ միջոց քան բնութիւնը՝ Աստուծու զաղափարն աշակերտների մէջ ամրացնելու։

Նթէ ճիշդ է, որ բնութիւնը մարդուս սրտի մէջ զգացումներ է չառաջացնում, ապա պէտք է ալդ զգացումներն արտապատւեն և չը խափանեն։ Ազդ վերջինների ճնշողութիւնը զասափարակութեան ոխներիմ թշնամին է։ Մարդ չէ կարող հանգստութիւն գտնել, մինչև սրտի մէջ լիքն ըդ գացումներն չը թափէ—չը թեթեանակ ալդ բեռից։ Ահաւասիկ զգացմանց ալդ արտապատութիւնն է։ Իրգու Ազդ վերջինը զպրոցական զրօսանքի անբաժան բարեկամն է։ Ա՛խու, ինչպէս թեթեանում է մարդուս սիրսոն, իրք

բնութեան գեղեցկութիւնը դիմելիս՝ գեղգեղում է իւր ձակնը. Թէս տարա-  
բազգաբար քիչ հավական երգեր ունինք, որոնց նիւթը բնութիւնից է  
վերցրւած, սական եղածից պէտք է օգտւել. Այս դէպքում, կարծես,  
մեր բանաստեղծները վարակւած են հալրենասիրական երգերի ստեղծա-  
գործութեամբ; Թէս այս արդիւնք է միասն բանաստեղծական կեղծ հանճարի.

## III.

ԱՅՆ ԱՐՏԱՔԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՆ, ՈՐՈՇԻՑԻՑ ԿԱԽՈՒՄՆ ՈՒՆԻ ԴՊՐՈՑԱԿԱՆ  
ԶԲՈՍԱՆՔԻ ԱՐԴԻՒՆԱԿՈՐ ՀԵՑԵՒԱՆՔՆ.

Աւելորդ չի լինիլ թմել այն զվարաւոր պակմաններն, որոնցից յակա-  
պէս կախւած է զպրոցական զրօսանքի լաջողութիւնը, որովհետեւ այդ  
վերջինը չէ մի հասարակ զրօսանք, այլ դաս, որն ունի իւր սիստեմատի-  
կական նպատակն:

Նախ, ինչպէս բարեխիղճ ուսուցիչը դպրոցի դասաստութեան համար  
մանրամասն պատրաստում է, անպէս էլ պէտք է զրօսանքի համար պատ-  
րաստի. Մեր ասածներից հետեւում է, որ ուսուցիչն աշակերտի ծննդա-  
վալը և նորա մերձակալ շրջակավը, ըստ նորա այխարհագրական, պատ-  
մական, բնադիտական տեսակէտից հիմնովին պէտք է ուսումնասիրած լի-  
նի. Նթէ ադդ ուսումնասիրութիւնն էլ տեղի է ունեցել, պահանջւում է  
իւրաքանչիւր զրօսանքի համար մասնաւորապէս հիմնովին նախապատ-  
րաստել. Ուսուցիչն պէտք է կատարեալ տեղեակ լինի այն տեղին, ուր  
պէտք է աշակերտները գնան, և այն առարկաներին, որոնց վերադ աշա-  
կերտների ուշաղրութիւնն պէտք է դարձնել. Նա պէտք է սկզբից իրան  
հաշիւ տւած և չափած լինի այն տարածութիւնն, ուր զրօսանքը տեղի է  
ունենալու, որպէս զի աշակերտները չը լոգնեն ու չը վնասեն իրանց առող-  
ջութիւնը. Մի խօսքով ուսուցիչը պէտք է ամբողջ զրօսանքից պարզ գա-  
ղափար ունենալ, իսկ այդ կարող է տեղի ունենալ, եթէ նա սկզբից աչ-  
ցելէ այն տեղերն, ուր պէտք է իւր աշակերտներին կետոց առաջնորդէ:

Իւրաքանչիւր դպրոցական զրօսանք պէտք է մի մօտաւոր նպատակ  
ունենալ, որը բոլոր մանուկներին պէտք է ծանօթ լինի. Աննպատակ թա-  
փառելն չէ կարելի դպրոցական զրօսանք անուանել, որովհետեւ դպրոցն է  
կամքի զարգացման տաճար. Հետևաբար, պէտք է աշակերտներին սկզբից  
չալտնել, թէ մենք կամենում ենք ալսօր այս ինչ դիւդն ացելել և գիւ-  
ղացիների արաերում ցանած բոլսերին ծանօթանալ, կամ այն լինչ լճակի  
մօտ շրջել և դիտել այն բոլսերն, որոնք աճում են նորա ափերին և այն  
կենդանիներն, որոնք ապրում են այդ փոքրիկ լճակում. կամ ուղում ենք  
տեսնել մի ալ գիւղի մէջ զանուող ամերակներն. Այսպէս՝ աշակերտներին  
ծանօթացնելուց կետոց, պէտք է նոցանից պահանջել, որ նո-

քա ակն բոլորն առեն, ինչ որ ազգ աւերակի մասին զիտեն՝ տնուել և լսել են.

Թոլոր աշակերտները պէտք է ունենան իրանց հետ քսակներ իրանց ուստելքներով, բացի այդ՝ ուսումնարան բերելու համար այն բոլոնքն, կամ այն հանգերն և այլ առարկաներ, որոնք կարելի է քսակի մէջ դնել. Ուսուցիչն պէտք է որոշէ թէ ինչ ժամերում պէտք է ուտել, կարող է նաև պատահել, որ գիւղում մնան և կաթ ու մածուն պատւիրեն. ուսուցիչը չը պէտք է իւր համար աշակերտներից ջոկ աւելի բան պատվիրէ:

Դպրոցական զրօսանքի ժամանակ պէտք է խիստ կարգապահութիւն լինի. Սորան կարող է օժանդակել մասամբ ուսուցչի և աշակերտի բարեկամական լարարերութիւնը. սական պէտք է աշքի առաջ ունենալ մի քանի որոշ կարգապահական օրէնքներ, որոնք անհրաժեշտ են զրօսանքի ժամանակի. Նաև՝ այն աշակերտներն, որոնք այդ զրօսանքին մասնակցելու են, պէտք է դպրոցի բակում զուգ-զուգ կանգնեն դէմքերը դէպի ուսուցիչըն արած. Ազդ վերջինը բացատրում է, թէ մի որ և իցէ առարկան դիտելիս, ինչպէս պէտք է իւր շուրջը խմբւեն, որ իրար չը խանգարեն:

Ազա սկսում է դնացքն: Առհասարակ ուսուցչից է կափւած թէ աշակերտներն ինչպէս պէտք է ձանապարհին քալին. Եթէ տղաքը են՝ պէտք է քիչ թէ շատ զինուրական խսութեան հնունեն, եթէ աղջկերք են՝ թողնել իրանց կամքին. Գնացքի ժամանակ պէտք է ուսուցիչն երբեմն մէկին, երբեմն միւսին մօսենակ և զուցէ. հետեւրար, սխալ կը լինէր, եթէ ուսուցիչն անխօս կատելից գնար: Եթէ ձանապարհին դիտելու մի որ և իցէ բան կար, պէտք է ծափանարութեամբ կանգնելու նշան տալ: Դիտողութիւնից և խօսակցութիւնից կետով պէտք է կրկին գնացքն իւր տեղից շարժւի: Եթէ մի որ և իցէ դէպքում պէտք է աշակերտները կանգ առնեն հանգստանալու համար, կարելի է նոցա երկել տալ կամ խաղանել, սական ուսուցիչն ինքը պէտք է որոշէ աղդ խաղն, ըստ որում եթէ աշակերտներին մնալ, ժամեր կը տեէ մինչև որ համաձախւեն իւրար հետ:

Դիտողութեան ժամանակ պէտք է աշակերտները գիտակից լինին, որ կարենոր է լարաւած ուշաղրութեամբ դիտել առարկան, որից կետով պէտք է նոքա իրանց խօսքերով նկարագրեն այն, ինչ որ տեսնում են: Վերարասանալիս անհրաժեշտ է երգեցողութիւնը, որպէս զի լոգնածութիւնը մոռանան: Դպրոցական զրօսանքների թիւը չը պէտք է մի քանիսով վերջացնել. մի երկու դէպքեր չեն կարող գոհացուցիչ լինել իւր ալդ զործը հասկացող ուսուցչի համար:

Իսկ իւրագանչիւր պարտաճանաչ ուսուցիչ, եթէ նա զիտէ անձնվի րութեամբ կամ հաւատարմութեամբ ծառաւել իւր բարձր կոչման, նա կը հետալզոտէ իւր սուրբ նպատակին հասնելու բոլոր միջոցներն, ըստ որում և ըմբռնելով զրօսանքի կարևորութիւնը, կ'ուսումնասիրէ և նոլանից ա-

ւելի շատ օպումել կը կարողանակ, քան մեր գրիչը ակստեղ բացատրել կարողացաւ. Միակն այն ուսուցիչն, որ, իւր սուղ գիտութեամբ բաւականանալով, իւր համար օրէնք չէ դնում օրըստորէ լառաջադիմելու, ապա և չէ օգտում ամերողջ ուսումնական աշխարհում հաստատապէս ընդունած դաստիարակչական միջոցներից և պազմաններից և մոռանում է մեր չեւտած կարևոր կէտերը՝ թո՞ղ նա անուշադիր թողնէ մեր լողւածն, որովհետեւ ավզպիսիների համար չէ դրւած մեր մանկավարժական զրուցակցութիւնը.

---